Տնտեսական համագործակցության հարցերով հայ-ուկրաինական միջկառավարական համատեղ հանձնաժողով

Տնտեսական համագործակցության հարցերով հայ-ուկրաինական միջկառավարական համատեղ հանձնաժողովը հիմնվել է համաձայն 1994թ. հոկտեմբերի 7-ին կնքված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ուկրաինայի կառավարության միջև ազատ առևտրի մասին» Համաձայնագրի: Հայկական կողմից հանձնաժողովի համանախագահն է Սուրեն Կարայանը՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարը: Հայ-ուկրաինական միջկառավարական համատեղ հանձնաժողովի անդրանիկ նիստը կայացել է 1999թ. հուլիսի 20-ին՝ Կիևում: Մինչ օրս անց են կացվել հանձնաժողովի 7 նիստեր: Վերջին յոթերորդ նիստը տեղի է ունեցել 2013թ. նոյեմբերի 8-ին՝ Կիևում: Հաջորդ նիստը նախատեսվում է անցկացնել Երևանում: